Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:
Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

336.3
խ-11

2 802-10

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ԽՍՀՄ ՖԻՆԺՈՂԿՈՄԻ
ՏԵՂԱԿԱԼ՝ ԳՐԻՆԿՈ

«Համաձայնեցված է»
ԽՍՀՄ ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻՆ ԿԻՑ ՊԵՏԱԿԱՆ ՎԱՐԿԻ ՑԵՎ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Զացկայեվ

# ՀՐԱՀԱՆԳ 203

*«Հնգամյակի չորրորդ ավարտական տարվա» պետական ներքին փոխառության քաղաքային բնակչության մեջ իրացնելու կարգի և պայմանների մասին։*

*(Հրատարակվում է ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի, փոխառության բաց թողման մասին, ունեցած վորոշման հիման վրա)։*

## 1. ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. *Փոխառության իրացումն անց է կացվում լրիվ կամավորության, լայն ագիտացիոն մասսայական աշխատանքի մեթոդների հիման վրա։*

2. *Փոխառության տարածման կամպանիայի կազմակերպումն ու անցկացումը դրվում է Պետաշխնայողդրամարկղների և Պետվարկի սիստեմի հիմնարկների վրա ֆինմարմինների ղեկավարությամբ։*

*Փոխառության հաջող տարածելու պատասխանատվությունը կրում են ֆինմարմիններն և Պետաշխնայողդրամարկղների ու Պետվարկի հիմնարկները։ Փոխառության ագիտմասսայական միջոցառումները տարվում են արհմիութենական և ուրիշ հասարակական կազմակերպությունների, պետվարկի և խնայգործի օժանդակ հանձնաժողովների, խորհրդային և տնտեսական մարմինների, ինչպես և մամուլի միջոցով։*

3. *Փոխառության տարածումը քաղաքային բնակչության մեջ սկսվում է* 1932 *թ. հունիսի* 1-*ից*։ 2—3 *տասնօրյակի ընթացքում պետք է ապահովվի բոլոր աշխատավորների* 100 %-*յա ընդգրկումը փոխառությամբ։ Սակայն փոխառության տարածման այդ ժամկետից հետո աշխատանքը չի դադարում և նա վերափոխվում է արտադրության, շինարարության և ապարատի մեջ նոր ներգրավվող բանվոր-ծառայողներին փոխառությամբ ընդգրկելու։*

4. *Փոխառության իրացման գործում կազմակերպչական, գործառնական և տեխնիկական ճիշտ սպասարկումն ապահովելու համար, աշխատավորական կոլեկտիվները, քաղաքային բնակչության առանձին խմբերը պետք է բաշխվեն Պետաշխնայողդրամարկղների մեջ։ Խնայդրամարկղների վարիչները պատասխանատու են իրենց խնայդրամարկղներին ամրացված աշխատավորական կոլեկտիվների քաղաքային բնակ-*

11 SEP 2013

չության առանձին խմբերի մեջ փոխառության աշխատանքների դրության, ինչպես և այդ նույն կոլեկտիվներում և խմբերում փոխառության գործառնական և տեխնիկական սպասարկման գործի դրվածքի համար:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Փոխառության իրացման գործում կարող են ներգրավվել կոմունալ (քաղաքային) բանկերը, բանկի կառավարչի և ՇՐՋ. (քաղաք.) խնայդրամարկղի վարիչի համաձայնությամբ փոխառության տարածման համար ներգրավված կոմունալ (քաղաքային) բանկերը հանդիսանալով ՇՐՋ. (քաղ.) խնայդրամարկղների կոնտրագենտները, փոխառության գծով իրենց աշխատանքները տանում են ներկա հրահանգի սահմանած կարգով և պայմաններով: Բանկերի կառավարիչները պատասխանատվություն են կրում բանկերի վրա դրված, փոխառության հաջող իրացման համար:

5. Քաղաքներում և քաղաքատիպ վայրերում փոխառության տարածումը տարվում է կոլեկտիվ բաժնեգրության և պարտատոմսերի կանխիկ վաճառման կարգով (նրանց արժեքի միանվագ վճարումով):

## 2. ԿՈԼԵԿՏԻՎ ԲԱԺՆԵԳՐՈՒԹՅՈՒՆ

### ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՎՈ՞Ր ԽՄԲԵՐՆ ԵՆ ՈԳՏՎՈՒՄ ԿՈԼԵԿՏԻՎ ԲԱԺՆԵԳՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ

6. Կոլեկտիվ բաժնեգրության մասնակցելու իրավունքից ոգտվում են բնակչության հետևյալ խմբերը՝

ա) բանվորներն ու ծառայողները—իրենց ձեռնարկների, հիմնարկների և կազմակերպությունների միջոցով.

բ) ԲԳԿԲ, ԲԳԿՆ, ՄՊԲՎ, ուղեկցող գործի և ԲԳ միլիցիայի անձնական կազմը—իրենց մասերի, մարմինների կամ հիմնարկների միջոցով.

գ) կոոպերատիվ տնայնագործները—իրենց կոոպերատիվ միավորումների միջոցով.

դ) ուսանողներն ու դասատուական կազմը—իրենց ուսումնական հիմնարկների միջոցով.

յե) թոշակառուները—թոշակների վճարում կատարող ապահովագրական և խնայողական դրամարկղների միջոցով.

զ) ազատ պրոֆեսիայի անձինք—նրանց միավորող կազմակերպությունների միջոցով.

է) քաղաքային անկազմակերպ բնակչությունը, վորոնք ոգտվում են ընտրական իրավունքից—բնակարանային ընկերությունների, տրեստների, վարձակալական ընկերությունների, բնակշինկոոպների և տնային վարչությունների միջոցով:



336.3
Խ-11

## ԿՈԼԵԿՏԻՎ ԲԱԺՆԵԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ
## ՄԱՍ-ՄԱՍ ՎՃԱՐՄԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

7. Կոլեկտիվ բաժնեգրության դեպքում աշխատավորության համար պարտատոմսերի մաս-մաս վճարում կատարելու ժամկետ տրվում է մինչև 10 ամիս:

### ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍ-ՄԱՍ ՎՃԱՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

8. Բանվոր ծառայողների մեջ կոլեկտիվ բաժնեգրությունը տարվում է այն հաշվով, վորպեսզի առաջին մուծանքի վճարումն ապահովվի բաժնեգրվողի 1932 թ. հուլիս ամսվա առաջին կեսի աշխատավարձից, իսկ վերջին մուծումը պետք է կատարվի 1933 թվի ապրիլ ամսվա յերկրորդ կեսի աշխատավարձից: Այս դեպքում մաս-մաս բաժնեգրությունը կկազմի ուղիղ 10 ամիս:

Այն դեպքում, յերբ առաջին մուծումը կատարվում է վոչ 1932 թ. հուլիսի առաջին կեսից, այլ նրանից ավելի ուշ, մաս-մաս մուծելու տեվողությունը համապատասխանորեն կրճատվում է այնպես, վորպեսզի վերջին մուծանքն այնուամենայնիվ կատարվի 1933 թ. ապրիլ ամսվա յերկրորդ կեսի աշխատավարձից:

1007/30138

Բանվոր-ծառայողների մուծումների առաջին և վերջին ժամկետի համաձայն սահմանվում է քաղաքային անկազմակերպ բնակչության (տնայնագործներ և այլն) կոլեկտիվ բաժնեգրության վճարումների սկիզբն ու վերջը: Այս կարգի բաժնեգիրներն առաջին մուծումն անում են 1932 թ. հուլիսի մեկից, իսկ վերջինը մինչև 1933 թ. մայիսի մեկը:

9. Պարտատոմսերի ժամկետներով վճարելը կատարվում է կիսամսյա հավասար մասերով: Աշխատավարձ չստացող բաժնեգիրները (անկազմակերպ բնակչությունը և այլն) կարող են պարտատոմսերի վճարումը կատարել ամսական հավասար մուծումներով:

Պարտատոմսերի դիմաց մուծումները կատարվում են, ինչպես աշխատավարձի դիմաց տրված ավանսներից, այնպես էլ անցած ամսվա համար վորպես վերջնական հաշվարկ տրվող աշխատավարձից: Ավանսից տրվող, մուծման չափը, սահմանվում է աշխատավարձի դիմաց տրվող ավանսի չափի համաձայն:

10. Բանվոր-ծառայողների կոլեկտիվ նոր մտածների, փոխառության բաժնեգրելիս, բաժնեգիրն իր բաժնեգրության գումարը վորոշում է այն հաշվով, վոր պարտատոմսերի վճարումն ավարտվի կոլեկտիվի հետ միաժամանակ, այսինքն 1933 թ. ապրիլ ամսվա յերկրորդ կեսի աշխատավարձից տրվող մուծումով:

11. Պարտատոմսերի վաճառքը, կոլեկտիվ բաժնեգրության կարգով, կատարվում է պարտատոմսերի վրա նշանակված գներով:

## ԲԱԺՆԵԳԻՐՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

12. Առաջին մուծումը կատարելուց հետո բաժնեգիրը պարտատոմսից յեկամուտ ստանալու իրավունք է ստանում վորպես շահումներ (փոխառության շահող մասից՝ և տոկոսներով (փոխառության տոկոսային նմասից): Այս իրավունքը բաժնեգիրն ունի այն պայմանով միայն, յեթե նա ժամանակին է կատարում պարտատոմսերի գնման անհրաժեշտ մուծումները:

Փոխառության շահող մասի բաժնեգրության իր ամբողջ գումարի չափով, բաժնեգրի անվան ամրացվում են պարտատոմսեր:

Մաս-մաս մուծումների տևողության ժամանակաշրջանում, շահումների խաղարկության մասնակցելու համար, բաժնեգիրն ստանում է ամրացման տալոններն իրեն անվան ամրացված պարտատոմսերի համարներով: Պարտատոմսի համարին և սերիային ընկած շահման վճարումը կատարվում է Պետաշխնայդրամարկղին այդ տալոնը և բաժնեգրության մուծումների ժամանակին և լրիվ վճարելու մասին տեղեկանք ներկայացնելու դեպքում: Նման տեղեկանք բաժնեգիրն ստանում է բաժնեգրության տեղից (այնտեղից, վորտեղ բաժնեգրվել է): Շահումն ստանալու համար տվյալ կոլեկտիվի բաժնեգիրների ամրացման տալոնները ցույց տված տեղեկանքների հետ ներկայացվում են այն պետաշխնայդրամարկղներին, վորին ամրացված է այդ կոլեկտիվը: Շահումը վճարելուց հետո ամրացման տալոնը վերադարձվում է բաժնեգրին, շահումը վճարելու մասին նշանակում անելով: Բաժնեգրի կողմից բոլոր մուծումներն անելուց հետո նրան տրվում է տալոնների հետ փոխանակելու կարգով, տալոններում նշած համարների պարտատոմսերը:

Այն բաժնեգիրը, վոր կորցրել է տալոնը, ամրացված պարտատոմսերի նկատմամբ իր իրավունքը չի կորցնում. դրանց համարները պահվում են տալոններ տվող պետաշխնայդրամարկղում: Բաժնեգիրը իր ձեռնարկի կամ հիմնարկի միջոցով կարող է Պետաշխնայդրամարկղից ստանալ իրեն անվան ամրացված պարտատոմսերի համարների ցուցակը: Այն բաժնեգիրը, վորին ամրացման տալոնով տրված է շահումը, պարտատոմսերի բաժնեգրության հաշվարկների վերջացնելուց հետո, պարտատոմսը տրվում է, առանց շահումն ստանալու իրավունք տվող ստուգիչ տալոնի: Այդ պարտատոմսով բաժնեգիրն ստանում է միայն նրա իսկական արժեքը, վոր վճարվում է 1936 թ. դեկտեմբեր ամսին: Այնքան վորքան փոխառության տոկոսային մասը հանդիսանում է անշահում, ապա այդ պարտատոմսերը բաժնեգիրներին չեն ամրացվում և վոչ մի տալոն բաժնեգրին չի տրվում: Տոկոսային մասի պարտատոմսի ամբողջ արժեքը վճարելուց հետո բաժնեգիրը վճարած պարտատոմսն ստանում է նրա հետ յեղած բոլոր կուպյուրներով:



## ԲԱԺՆԵԳՐԻ ԿՈՂՄԻՑ ՄՈՒԾՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

13. Առանց հարգելի պատճառի հերթական մուծումը ժամկետից ուշացնող բաժնեգիրը, զրկվում է շահող մասի իրեն ամրացված պարտատոմսերի և նրա շահման ձևի յեկամուտի իրավունքից:

Այս դեպքում շահող բաժնի պարտատոմսերը, վորոնք ամրացված են բաժնեգրին, նրանից հանվում են: Պարտատոմսերի բաժնեգրից հանելը կատարվում է հերթական խաղարկության ժամկետը հասնելուց յերկու շաբաթ առաջ: Ամրացումը հանելիս Պետաշխնայդրամարկղը մուծման գումարի չափով ամրացնում է բաժնեգրին շահող բաժնի պարտատոմսերի այն թվից, վոր նախկին խաղարկություններում չեն տարել: Յեթե նախկինում ամրացված պարտատամսերով շահում հայտնաբերվի, վորն ընկած լինի մինչև վերջին մուծումը կատարելը, այս դեպքում տարած պարտատոմսը տրվում է բաժնեգրերին ի հաշիվ նրանից մուտք յեղած մուծման:

Պարտատոմսերը բաժնեգրին տրվում է բաժնեգրության վերաբերյալ արած մուծումների գումարի մասին տեղեկանք ներկայացնելուն պես:

Փոխառության տոկոսային բաժնի բաժնեգրության հերթական մուծման ժամկետը ժամկետանց անելիս տրվում է մուտք յեղած մուծումների գումարի չափով տոկոսային բաժնի պարտատոմսեր:

Յեթե բաժնեգրի մուծած գումարը 10 ռ. կուպյուրի վրա չի բաժանվում, ապա բաժնեգիրը լրացուցիչ մուծում է կատարում կանխիկ դրամով մինչև 10 ռ. պարտատոմսի արժեք լրացնելը:

Բաժնեգիրների հետ հաշվարկներ կատարող վարչությունը, պարտավոր է շահումների խաղարկությունից յերկու շաբաթ առաջ անուղղելի բաժնեգիրների մասին տեղեկություններ հայտնել խնայդրամարկղին: Տեղեկությունները հայտնվում են ցուցակով, վոր կազմվում է հետևյալ ձևով՝

ա) մուծումները ժամկետանց անող բաժնեգիրների ազգանուն, անուն, հայրանուն. բ) բաժնեգրության նախնական գումարը բաժանելով այն փոխառության բաժինների և պարտատոմսային կուպյուրների. գ) մուտք յեղած մուծումների գումարը. դ) բաժնեգրության մնացորդ պարտքի գումարը. յե) վերջին մուծումը կատարելու ժամանակը:

Մուծումների ժամկետանց անող բաժնեգիրների պարտքի գումարով պակասեցվում է տվյալ կոլեկտիվի բաժնեգրության ընդհանուր գումարը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Ուժանդակ հանձնաժողովը բաժնեգրի հայտարարությամբ շահումների խաղարկությունից վոչ ուշ քան յերկու շաբաթ առաջ կարող է թույլ տալ ընդունել բաժնեգրից ժամկետանց արած մուծումը, պայմանով, յեթե ժամկետանց անելն առաջ է յեկել հարգելի պատճառից: Ժամկետանց արած գումարի ընդունման դեպքում վերապահվում է բաժնեգրի իրավունքն իրեն ամրացված պարտատոմսերի նկատմամբ:

## ԿՈԼԵԿՏԻՎ ԲԱԺՆԵԳՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ՀԱՇՎԱՌՄԱՆ, ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՅԵՎ ԲԱԺՆԵԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

### ԿՈԼԵԿՏԻՎՆԵՐԻՆ ԿԻՑ ՊԵՏԱՇԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՅԵՎ ՊԵՏՎԱՐԿԻ ՈԺԱՆԴԱԿ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### Կոլեկտիվ բաժնեգրության կազմակերպումն ուժանդակ հանձնաժողովների կողմից

14. Կոլեկտիվներում, փոխառության ագիտ-մասսայական բացատրական աշխատանքը տարվում է Պետվարկի և խնայգործի ստորին ուժանդակող հանձնաժողովների կողմից գործարկոմ-տեղկոմների և վերադաս ուժանդակ հանձնաժողովների ղեկավարությամբ:

Փոխառության աշխատանքի կազմակերպման տեխնիկական հրահանգումը և պրակտիկ ոգնությունն ուժանդակ հանձնաժողովն ստանում է այն աշխնայդրամարկղից, վորին ամրացված է կոլեկտիվը:

Պետաշխնայդրամարկղից ուժանդակ հանձնաժողովն ստանում է նաև բաժնեգրությունն անցկացնելու բոլոր ագիտացիոն և ոպերատիվ նյութերը:

Մինչև փոխառության կամպանիայի սկիզբն ուժանդակ հանձնաժողովը պետք է տանի անհրաժեշտ նախապատրաստական, կազմակերպչական, ագիտացիոն միջոցառումներ, ինչպես՝ ստեղծել կապ Պետաշխնայդրամարկղի հետ, ուժանդակ հանձնաժողովի անդամների և ցեխային (բաժինների, բրիգադների) լիազորների կազմն ստուգել նրա ուժեղացման և ամրացման նպատակով. փոխառության կամպանիայի կոլեկտիվում անցկացնելու պլան մշակել, մտցնել այդ պլանը տեղկոմի և կուսբյուրոյի հաստատության. ակտիվը մոբիլիզացիա անել ներգրավելով առաջին հերթին Պետվարկի հարվածայիններին և հասարակական հրահանգիչներին, ապահովել ակտիվի պատրաստումը փոխառության աշխատանքը տանելու համար:

Բաժնեգրությունն անցկացնելու համար լիազորներ առանձնացնել, հրահանգել նրանց և ուժտել (տալ) բաժնեգրաթերթիկներով, ինչպես և անհրաժեշտ ագիտ-գրականությամբ, ստանալ վարչությունից տեղե-



կություն աշխատավարձի ֆոնդի և կոլեկտիվ անդամների քանակի մասին. պատրաստվել փոխառության ագիտացիոն մասսայական և բացատրական աշխատանք տանելու, բաժնեգրության ժամանակ լայն սոցմրցում, հարվածայնություն և այլն կազմակերպելու համար:

Մինչև բաժնեգրության սկսելն անց է կացվում բանվոր-ծառայողների կոլեկտիվների փոխառության նվիրված լայն ժողովներ:

### ԻՆՉՊԵՍ Ե ԱՆՑԿԱՑՎՈՒՄ ԲԱԺՆԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ

15. Բաժնեգրությունն անց է կացվում կոլեկտիվի անդամների մոտ անցնելով և բաժնեգրության թերթիկներ լրացնելով: Յուրաքանչյուր բաժնեգիր ինքն է վորոշում, թե ի՞նչ գումարի փոխառություն է գրվում: Բաժնեգիրն իր բաժնեգրության գումարը հաստատում է բաժնեգրության թերթիկում իր ստորագրությամբ: Բաժնեգրություն հավաքող լիազորը, պետք է բացատրի յուրաքանչյուր բաժնեգրին, վոր ինքը բաժնեգիրն է ընտրում փոխառության այս կամ այն բաժինը (շահող կամ տոկոսային) և այս կամ այն արժեքի պարտատոմսերը (100, 50, 25 և 10 ռ.):

Լրացրած բաժնեգրության թերթերը լիազորները հանձնում են ուժանդակ հանձնաժողովին, վորը բաժնեգիրների հայտերի (զայավկաների) հաշիվների հիման վրա բաժնեգրության ընթացքի մասին տեղեկություն է ներկայացնում վերադաս ուժանդակ հանձնաժողովին, պետաշխնայդրամարկղին, կոլեկտիվի հասարակական կազմակերպություններին: Բաժնեգրության ընթացքի մասին տեղեկություններ ներկայացնելու կարգն ու ժամկետները սահմանվում են տեղում շրջանային (քաղաքային) ուժանդակ հանձնաժողովների և Պետաշխնայդրամարկղների կողմից:

16. Ուժանդակ հանձնաժողովները չպետք է թույլ տան իրենց մոտ լրացված բաժնեգրության թերթիկների պահումն, հանձնելով այդպիսիք վարչության բաժնեգրությունը ձևակերպելու և հաշվարկներն անելու համար:

Ուժանդակ հանձնաժողովները չեն կարող իրենց վրա վերցնել բաժնեգրության վորևէ դրամական հաշվարկների տանելը և բաժնեգիրներից դրամ հավաքելը:

Ուժանդակ հանձնաժողովների պարտականության մեջ մտնում է հսկել և ստուգման յենթարկել վորպեսզի վարչությունը ամենակարճ ժամանակամիջոցում բաժնեգրությունը ձևակերպի Պետաշխնայդրամարկղում, վորպեսզի հետագայում ժամանակին կատարվի հաշվարկները բաժնեգիրների հետ և մուծումները ժամանակին և լրիվ կերպով կատարվի վարկային հիմնարկին: Վարչության կողմից բաժնեգրության ձևակերպումը կամ հերթական մուծումները դանդաղեցնելու դեպքում,

ոժանդակ հանձնաժողովը պարտավոր է անմիջապես հայտնել այդ մասին կոլեկտիվի հասարակական կազմակերպություններին, վերադաս ոժանդակ հանձնաժողովին և Պետաշխնայդրամարկղին:

## ՈԺԱՆԴԱԿ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԲԱՆՎՈՐ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՈԼԵԿՏԻՎ ՆՈՐ ՄՏԱԾՆԵՐԻՆ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՄԲ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ԳԾՈՎ

17. Կոլեկտիվ բաժնեգրության հաշվարկների ամբողջ ժամանակաշրջանում ոժանդակ հանձնաժողովներն սիստեմատիկ աշխատանք են տանում բանվոր-ծառայողների կոլեկտիվ նոր մտած յուրաքանչյուր անդամին փոխառության մեջ ներգրավելու համար:

Ոժանդակ հանձնաժողովը վարչությունից ամեն ամիս պետք է տեղեկություն ստանա նոր աշխատանքի մտած բանվոր ծառայողների մասին և բոլոր ագիտացիոն կարգի միջոցները ձեռք առնի կոլեկտիվի նոր անդամներին բաժնեգրության մեջ ընդգրկելու համար:

Ոժանդակ հանձնաժողովը պետք է ապահովի նաև այն բանվոր ծառայողների, ինչպես և կոլեկտիվի անդամների բաժնեգրությամբ ընդգրկումը, վորոնք աշխատանքի են անցել այլ ձեռնարկներից (հիմնարկներից) սակայն ինչ-ինչ պատճառներով չեն ընդգրկվել փոխառությամբ:

Նոր բաժնեգրությունների բաժնեգրման թերթիկներն առանց դանդաղելու հանձնվում են վարչության լրացուցիչ բաժնեգրությունը Պետաշխնայդրամարկղում ձևակերպելու և հաշվարկներ անելու համար:

## ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐ ՀՕԳՈՒՏ ՈԺԱՆԴԱԿ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

18. Քաղաքային (շրջանային) ոժանդակ հանձնաժողովների կարգադրության հանձնվում է քաղաքի տերիտորիայում կոլեկտիվ բաժնեգրությունից մուտք յեղած գումարից 0,15 %-ի չափով մասհանում (բացառությամբ պին. ծառայողներից, տրանսպորտիկներից, ՄՊԳՎ. անձնական կազմից և միլիցիայից— տես ՀՀ 29, 31, 32 և 33):

Այս մասհանումներն ոժանդակ հանձնաժողովներին տալիս են շրջանային (քաղաքային) խնայդրամարկղները յերկու ժամկետում՝ բաժնեգրությունը ձևակերպելուց հետո —0,1 տոկոս ձևակերպած բաժնեգրության գումարից և հաշվարկները կատարելուց — մասհանման մնացած մասը:

Ստացվող մասհանումները շրջ. (քաղ) ոժանդակ հանձնաժողովները դարձնում են ոժանդակ հանձնաժողովի փոխառության հետ կապված ծախքերը ծածկելու, ինչպես և օգտագործում են ստորին ոժանդակ հանձնաժողովներին, ակտիվիստներին և այլոց փոխառության աշխատանքը հաջող տանելու համար պարգևատրելու:



## ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՋՈՂ ՅԵՎ ՈՐԻՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ

19. Փոխառության իրացման մասսայական-քաղաքական աշխատանքի լավագույն որինակ լինելու և փոխառության իրացման հաջող արդյունքների համար պարգևատրվում են պետվարկի և խնայգործի ոժանդակ հանձնաժողովները, առանձին կոլեկտիվներն ու ապարատը, ինչպես և առանձին ակտիվիստներն (ոժանդակ հանձնաժողովների անդամները, հասարակական լիազորները և այլն):

Վերադաս ոժանդակ հանձնաժողովներն ի հայտ են բերում, փոխառության իրացման գործում իրենց աշխատանքով լավագույն ստորին ոժանդակ հանձնաժողովներին, հասարակական կազմակերպություններին, առանձին կոլեկտիվներին և այլն նրանց պարգևատրման ներկայացնելու համար:

Ստորին ոժանդակ հանձնաժողովներն իրենց հերթին, ի հայտ են բերում փոխառության գործում լավագույն աշխատանք ցուցաբերող առանձին ակտիվիստներին և հարվածայիններին և ներկայացնում են այդ ակտիվիստներին պարգևատրման, պարգևատրման կարգն ու պայմաններն սահմանվում են պարգևատրման մասին ԽՍՀՄ Կենտգործկոմի նախագահության կից խնայգործի և պետվարկի ոժանդակ կենտրոնական հանձնաժողովի կողմից հաստատված հատուկ կանոնադրությամբ:

## ՁԵՌՆԱՐԿՆԵՐԻ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՅԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

20. Ձեռնարկի, հիմնարկի և կազմակերպության վարչության վրա դրվում են կոլեկտիվ բաժնեգրության ձևակերպման, բաժնեգրության դրամական հաշվարկները կատարելու, վարկային հիմնարկից ամրացման տալոնները ու պարտատոմսերն ստանալու և նրանց բաժնեգիրներին բաժանելու ամբողջ աշխատանքը:

Վարչությունը պարտավորեցնում է իր հաշվային ապարատին, վոչ պակաս ամիսը մեկ անգամ ոժանդակ հանձնաժողովին ներկայացնել տեղեկություններ, ինչպես նոր ընդունված բանվոր-ծառայողների քանակի, նույնպես և նրանց աշխատավարձի ամսական ֆոնդի մասին:

Յուրաքանչյուր կոլեկտիվի վարչություն իր հաշվային ապարատի աշխատողներից մեկի վրա յե դնում փոխառության աշխատանքի տանելը և Պետաշխնայդրամարկղի հետ կապվելու գործը: Կոլեկտիվների հաշվային ապարատը պետք է ծանոթ լինի կոլեկտիվ բաժնեգրության պայմանների և բաժնեգրության հաշվարկներ կատարելու կանոնների հետ: Սպասարկվող կոլեկտիվը, հաշվային ապարատը Պետաշխնայդրամարկղից հրահանգչական և գործնական ցուցմունքներ են ստանում փոխառության աշխատանքը տանելու համար:

## ԲԱԺՆԵԳԻՐՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՇՎԱՐԿ ԱՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

21. Բաժնեգրման թերթիկներում բաժնեգրի տված համաձայնության հիման վրա ձեռնարկները, հիմնարկներն ու կազմակերպություններն բաժնեգիրների հետ հաշվարկներ են ստանում հետևյալ կարգով՝

Ձեռնարկի և հիմնարկի վարչությունը բաժնեգիրներին տրվող աշխատավարձից, պարտատոմսերի մուծումների դիմաց պահումներ է կատարում, կոոպերատիվ արտելների վարչությունները մուծումները պահում են բաժնեգիրներին հասնող վճարումներից, այլ կազմակերպությունների վարչությունները, վորոնք կոլեկտիվի անդամների հետ դրամական հաշիվներով չեն կապված, բաժնեգիրներից պարտատոմսերի համար անելիք մուծումների հավաք են կատարում:

Բոլոր ձեռնարկները, հիմնարկները և կազմակերպությունները պարտավոր են յուրաքանչյուր բաժնեգրի փոխառության մուծումների հաշիվ պահել:

Բաժնեգիրների հետ հաշվարկը պարզեցնելու համար բաժնեգրի հերթական մուծումների չափը պետք է սահմանել կլոր գումարներով:

Բաժնեգրի աշխատավարձը նախապես տալիս (գործուղումների, արձակուրդի ժամանակ) նրանից պահվում են մուծումներ այն ժամանակի համար, վորի համար տրվում է աշխատավարձը:

Յեթե բաժնեգիրը նպաստ է ստանում սոցապմարմիններից և չի մուծում հերթական մուծումները, ապա վերջինս պահվում է նրանից կոլեկտիվում աշխատավարձի տալը նորից վերսկսելու ժամանակ հավասար մասերով, մինչև բաժնեգրության մաս-մաս մուծումների ժամկետի վերջը:

22. Յեթե բաժնեգիրը կոլեկտիվից դուրս է գալիս, ապա պարտատոմսերի հաշվարկը նրա հետ կատարվում է հետևյալ ձևով՝ ա) բաժնեգիրը կարող է վճարել իր պարտատոմսերի ամբողջ գումարը և ստանալ լրիվ վճարած պարտատոմսերը, բ) բաժնեգրի կողմից բաժնեգրության իր ամբողջ պարտքը չվճարելու դեպքում, նրան տրվում է իր մուծումների գումարի չափ պարտատոմսեր, այս դեպքում նրա մուծած գումարի չափով առաջին հերթին տրվում են այն պարտատոմսերը, վորոնց շահում է ընկել: Պարտատոմսերը բաժնեգիրն ստանում է վարչության միջոցով կամ նրա տեղեկանքով անմիջականորեն խնայդրամարկղում: Կոլեկտիվից դուրս յեկած անդամի բաժնեգրության վչճարած գումարի չափով, պակասեցվում է կոլեկտիվի բաժնեգրության գումարը: Բաժնեգրության պակասեցումը կատարվում է խնայդրամարկղի կողմից կոլեկտիվի վարչության գրավոր հայտարարությամբ:

Յեթե հեռացող բաժնեգրի մուծումների գումարը չի բաժանվում 10-ի, ապա բաժնեգրից պահվում է մինչև 10 ռ. պարտատոմս գնելու գումարի պակասը:



Յեթե բաժնեգրին ամրացված պարտատոմսերը մեծ կուպյուրային են և դրա համար նրա կատարած մուծումներով չեն կարող մարվել, ապա խնայդրամարկղը մեծ կուպյուրային պարտատոմսերը մանրացնում է մանր կուպյուրի, վորոնք տրվում են բաժնեգրվողին:

Հեռացող բաժնեգիրը պարտատոմսերն ստանալիս վարչության պետք է հայտնի ամրացման տալոնները, վորոնք յենթակա յեն խնայդրամարկղին վերադարձնելու:

## ԲԱԺՆԵԳՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ԿԱՐԳԸ

23. Կոլեկտիվ բաժնեգրության ձևակերպումը կատարվում է վարչության կողմից խնայդրամարկղին կոլեկտիվի ամբողջ բաժնեգրության գումարի պարտատոմս գնելու պաշտոնական հայտ ներկայացնելով: Բաժնեգրության թերթերի հիման վրա ներկայացրած հայտում, պետք է ցույց տրված լինի՝ ա) բաժնեգրության ընդհանուր գումարը, բ) պարտատոմսերի գումարն ըստ փոխառության առանձին բաժինների, բաժանելով պարտատոմսերի կուպյուրների, գ) ինչ ժամկետներում և ինչ կարգով վարչությունը կոլեկտիվի բաժնեգրության հաշվարկներ պետք է կատարի խնայդրամարկղի հետ-չեկերով թե վոր վարկային հիմնարկում ունեցած վոր ընթացիկ կամ հաշվարկային հաշվից փոխանցումներ անելու հրամաններով:

Բաժնեգրությունը ձևակերպելու հայտը, վարչության ստորագրությամբ և կնիքով ներկայացվում է խնայդրամարկղին միաժամանակ կատարելով կոլեկտիվի բաժնեգրության առաջին մուծումը: Հայտը ներկայացնելիս ձեռնարկը, հիմնարկը, կազմակերպությունը Պետաշխնայդրամարկղին ներկայացնում են կնիքի պատճենի ձևը (ոտտիսկը) և այն անձանց ստորագրությունների օրինակները, վորոնք լիազորված են բաժնեգրության հաշվարկների հետ կատարված գրություններ ստորագրել:

Վարչությունը Պետաշխնայդրամարկղի պահանջով տեղեկություններ է ներկայացնում կոլեկտիվի անդամների թվի, նրա աշխատավարձի ֆոնդի, բաժնեգիրների քանակի, բաժնեգրությամբ ընդգրկելու չափի, բաժնեգրության աշխատավարձի ֆոնդի նկատմամբ կազմող տոկոսի մասին:

Լրացուցիչ բաժնեգրության ընդունող հիմնարկները պահում են բաժնեգիրներին տրված հերթական աշխատավարձից, նրա առաջին մուծումը և բաժնեգրությունը ձևակերպում են Պետաշխնայդրամարկղում, միաժամանակ փոխանցելով (մուծելով) այդ բաժնեգիրների առաջին մուծումը: Այն կազմակերպություններում, վորտեղ բաժնեգիրների մուծումները հավաքվում են, վարչությունը նոր բաժնեգիրներից կատարում է առաջին մուծման հավաքը և բաժնեգրությունը ձևակերպում է Պետաշխնայդրամարկղում, ուժանդակ հանձնաժողովից բաժնեգրության թերթերն ստանալուց 10 օրվա ժամկետում:

Բաժնեգրությունը ձևակերպելիս վարչությունը կարող է Պետաշխնայգրամարկղից ստանալ հաշվարկային կվիտանցիա, որի մեջ խնայգրամարկղի կողմից գրանցվում են բաժնեգրության բոլոր հաշվարկները:

## ԿՈԼԵԿՏԻՎ ԲԱԺՆԵԳՐՈՒԹՅԱՆ ՄՈՒԾՈՒՄՆԵՐԸ ՎԱՐԿԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ԿԱՐԳԸ

24. Բոլոր պետական, կոոպերատիվ և հասարակական հիմնարկները, ձեռնարկներն ու կազմակերպությունները, որ վարկային հիմնարկում ունեն ընթացիկ կամ հաշվարկային հաշիվ, կամ թե բյուջետային կարգով բացած վարկերի հաշիվ ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1931 թ. 25-ն մայիսի № 393 որոշման համաձայն, կոլեկտիվ բաժնեգրության հաշվարկները կատարում են իրենց ընթացիկ հաշիվներից անդրամային փոխանցումներ անելու ճանապարհով:

Հիմնարկները, ձեռնարկներն ու կազմակերպությունները կոլեկտիվ բաժնեգրության մուծումները վճարելու չեկերը կամ հրամանները ներկայացնում են այն հիմնարկին, որտեղ տվյալ հիմնարկն ընթացիկ կամ հաշվարկային հաշիվ ունի, թեկուզ և կոլեկտիվ բաժնեգրությունն այլ վարկային հիմնարկում, ձևակերպված լինի: Վերջին դեպքում չեկերը կամ հրամանները դուրս են գրվում այն Պետաշխնայգրամարկղի անվամբ, որտեղ կոլեկտիվ բաժնեգրությունը ձևակերպված է:

Կոլեկտիվ բաժնեգրության մուծումների վճարման չեկերը կամ հրամանները դուրս են գրվում աշխատավարձի մնացած մասի չեկից զատ: Մուծումը կատարելու չեկի կամ հրամանի մեջ անպայման ցույց է տրվում այն Պետաշխնայգրամարկղի անունը, որտեղ ձևակերպված է բաժնեգրությունը, և փոխառության բաժնեգրվելու հաշվարկային կվիտանցիայի համարը (խնայգրամարկղում անձնական հաշվի №-ը):

Կոլեկտիվ բաժնեգրության մուծումները վճարելու չեկերը կամ հրամանները ներկայացվում է վարկային հիմնարկին աշխատավարձի չեկերի կամ հրամանների հետ միաժամանակ, բայց ոչ ուշ, քան աշխատավարձը վճարելու համար սահմանած օրից:

Այն կազմակերպությունների վարչությունները, որոնցում բաժնեգիրներից մուծանքների հավաք է կատարվում, հավաքած դրամները հանձնում է Պետաշխնայգրամարկղին ոչ ուշ, քան դրամն ստանալուց յերեք օր հետո: Կոլեկտիվ բաժնեգրության մուծումները ժամանակին չմուծող անձինք յենթարկվում են քրեական պատասխանատվության:

## ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՅԵՎ ԱՄՐԱՑՄԱՆ ՏԱԼՈՆՆԵՐԻ ԲԱԺՆԵԳԻՐՆԵՐԻՆ ՏԱԼՈՒ ՀԱՐՑԸ

25. Ձեռնարկները, հիմնարկներն ու կազմակերպությունները պարտավոր են բաժնեգրման թերթերի հիման վրա կազմել բաժնեգիրների անվանացուցակները, ցույց տալով



ա) բաժնեգիրների համարներն ըստ կարգի, բ) բաժնեգրի ազգանունը, անունը և հայրանունը և գ) յուրաքանչյուր բաժնեգրի բաժնեգրության գումարը, բաժանելով փոխառության բաժինների և պարտատոմսերի կուպյուրների:

Հիմնական բաժնեգրության ձևակերպումից հետո հաստատված անվանական ցուցակները պետք է խնայգրամարկղ հանձնվեն ոչ ուշ յերկու տասօրյակի ժամկետից: Ցուցակի մեկ օրինակը պահվում է վարչության մոտ:

Պետաշխնայգրամարկղներն այդ ցուցակներով կատարում են՝ շահող բաժնի պարտատոմսերի ամրացում բաժնեգիրների անվան և ընտրություն տոկոսային բաժնի պարտատոմսերի: Յուրաքանչյուր բաժնեգրի համար (փաթեթի կամ ծրարի մեջ) ընտրած ամրացման տալոնները, հանձնվում է վարչության անմիջապես բաժնեգրերին բաժանելու համար: Յուրաքանչյուր բաժնեգիր ստորագրում է տալոններն ստանալու համար: Այդ ստորագրությունները մնում են վարչության մոտ մինչև պարտատոմսերի բաժանման վերջը: Որևէ պատճառով, խաղարկությունից առաջ, բաժնեգրին չտված տալոնները վարչությունը պարտավոր է կնքել և պահել իր մոտ մինչև բաժնեգրին հանձնելը:

Լրացուցիչ բաժնեգրության ընդունելու ընթացքում ձեռնարկը, հիմնարկը և կազմակերպությունը բաժնեգրությունը ձևակերպելու հետ միասին, Պետաշխնայգրամարկղներին հանձնում են նոր բաժնեգիրների անվանական ցուցակները նրանց պարտատոմսեր ամրացնելու համար:

Առաջին մուծումն արած բաժնեգիրների ցուցակը Պետաշխնայգրամարկղին հանձնելը և այդ բաժնեգիրներին պարտատոմսեր ամրացնելը, մինչև շահումների առաջին խաղարկությունը, պետք է ավարտված լինի այն հաշվով, որպեսզի մինչև առաջին խաղարկության սկիզբը բոլոր բաժնեգիրներն ստանան ամրացման տալոնները:

## ՇԱՀՈՒՄՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆ ԱՄՐԱՑՄԱՆ ՏԱԼՈՆՆԵՐՈՎ

26. Առաջին կամ յերկրորդ խաղարկության ընկած շահումներն ստանալու համար բաժնեգիրներն իրենց ամրացման տալոնները կարող են ներկայացնել Պետաշխնայգրամարկղին կամ անձամբ և կամ վարչության միջոցով:

Շահումն անձամբ Պետաշխնայգրամարկղից ստանալու ցանկություն ունեցող բաժնեգիրներին վարչությունը տալիս է տեղեկանք ցույց տալով նրա մեջ բաժնեգրի ազգանունն, անունն և հայրանունը և հաստատություն այն մասին, որ բաժնեգիրը լրիվ և ժամանակին մինչև խաղարկությունը, վճարել է պահանջվող մուծումները: Բաժնեգիրը տեղեկանքը խնայգրամարկղին ներկայացնում է ամրացման տալոնների հետ միասին:

Շահումները վարչության միջոցով ստանալու համար բաժնեգիրներն իրենց ամրացման տալոնները հանձնում են նրան: Վարչությունը 2 օրինակից ցուցակ է կազմում, ցույց տալով շահած ամրացման տալոնների հանձնող բաժնեգիրների ազգանունը, անունը, հայրանունը, պարտատոմսերի ինչ գնանոց լինելն ու համարները, բաժնեգրին հասնող շահման գումարը: Ցուցակում պետք է հաստատված լինի յուրաքանչյուր բաժնեգրի կողմից մինչև խաղարկությունը պահանջվող մուծումների ժամանակին և լրիվ կատարելը:

Վարչության ստորագրությամբ և կնիքով հաստատված ցուցակի մեկ օրինակն ամրացման տալոնների հետ միասին ներկայացվում է խնայդրամարկղին:

Ցուցակի երկրորդ օրինակը պահվում է վարչությունում:

Վարչությունը խնայդրամարկղից շահումների գումարն ստանալիս անմիջականորեն շահումները բաժանում է բաժնեգիրներին, ցուցակի երկրորդ օրինակում ստորագրություն առնելով նրանցից:

Շահած բաժնեգիրներին ամրացման տալոնները վերադարձվում է հետ, նշելով նրանց վրա շահումը վճարած լինելու մասին:

Շահումները բաժնեգիրներին վճարվում է առանց պարտատոմսի արժեքը պահելու և բաժնեգիրները շարունակում են մուծել իրենց բաժնեգրության ամբողջ գումարը:

## ՎՃԱՐՎԱԾ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԲԱԺՆԵԳԻՐՆԵՐԻՆ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ

27. Բաժնեգրման հաշվարկների վերջացնելուց հետո խնայդրամարկղները վարչությանն են հանձնում փոխառության շահող և տոկոսային բաժնի լրիվ վճարած պարտատոմսերը: Վարչությունն իր հաշվային ապարատի միջոցով անմիջապես բաշխում է պարտատոմսերը բաժնեգիրներին: Յուրաքանչյուր բաժնեգիր ստացած պարտատոմսերի համարները համեմատում է իր ամրացման տալոնում ցույց տված համարի հետ և վարչության մոտ պահվող անվանական ցուցակում ստորագրում է պարտատոմսերն ստանալու մասին:

Բաժնեգիրները պարտատոմսերն ստանալիս վերադարձնում են ամրացման տալոնները, որոնք վարչությունը վերադարձնում է խնայդրամարկղին:

Բաժնեգրին որևէ պատճառով չտրված պարտատոմսերը կարող են վարչության մոտ պահվել մեկ ամսից ոչ ավել, իսկ հետո յենթակա յեն խնայդրամարկղին հանձնելու: Վարչությունը, բաժնեգրերի կողմից չպահանջված պարտատոմսերը վերադարձնում է խնայդրամարկղին ցուցակի հետ, որում ցույց է տրվում՝ պարտատոմսերը չստացած բաժնեգրի ազգանունը, անունը և հայրանունը, բաժնեգրության գումարը ցույց տալով փոխառության բաժիններն ու պարտատոմսերի կուպյուր-



ները, բաժնեգրին պատկանող պարտատոմսերի համարները: Այդ պարտատոմսերը պահվում են խնայդրամարկղում մինչև բաժնեգրի ներկայանալը: Պարտատոմսերի պահելու համար բաժնեգիրներից վճար է գանձվում, որը սահմանված է պահման գործառնության կանոններով:

## ՁԵՌՆԱՐԿԻ, ՀԻՄՆԱՐԿԻ ՅԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

28. Ձեռնարկները, հիմնարկներն ու կազմակերպությունները ԽՍՀՄ Ֆինժողկոմատի առաջ լրիվ պատասխանատվություն են կրում փոխառության և պարտատոմսերի գծով նրանց իրավասության հանձնած դրամական մուծումների ամբողջության և պահպանման համար, ինչպես նաև նյութապես պատասխանատու յեն փոխառության իրացման և բաժնեգիրներին սպասարկելու կանոնների խախտելու հետևանքով առաջացած վնասների համար:

ԽՍՀՄ Ֆինժողկոմատը բաժնեգիրների առաջ պատասխանատվություն է կրում ձեռնարկներին, հիմնարկներին և կազմակերպություններին հանձնվող մուծումների և պարտատոմսերի ամբողջության պահպանելու համար:

## ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ԽՄԲԵՐԻ ՄԵՋ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

փոխառության իրացումը ԲԳԿԲ և ԲԳԿՆ անձնական կազմի միջև:

29. ԲԳԿԲ և ԲԳԿՆ անձնական կազմի միջև փոխառության տարածումը կատարվում է կենտրոնացած կարգով ԽՍՀՄ ՖԺԿ և ՌԾԺԿ միջև կնքված պայմանագրի հիման վրա: Կոլեկտիվ բաժնեգրության դեպքում զինվորական ծառայողներին պարտատոմսերի գծով մաս-մաս մուծումների ժամանակամիջոց է տրվում մինչև 12 ամիս—1932 թ. հոկտեմբերի 1-ից մինչև 1933 թ. հոկտեմբերի 1-ը: ԲԳԿԲ և ԲԳԿՆ կոլեկտիվ բաժնեգրության հաշվարկները կենտրոնացած կարգով կատարում է ՌԾԺԿ-ը, ՊԱԽԴ և ՊՎ Գլխավոր Վարչության հետ:

Բաժնեգրության հաշվառումը ԲԳԿԲ և ԲԳԿՆ մասերում և հիմնարկներում տարվում է միայն տնտեսական ապարատի գծով, իսկ շրջաններում և զինվորական նավահանգիստներում զինվորական-շրջանային և գլխ. ծովային օժանդակ հանձնաժողովների գծով, որոնք բաժնեգրության մասին տեղեկություններ են հայտնում ՌԾԺԿ կենտրոնական օժանդակ հանձնաժողովին: Տեղական ֆինանսական մարմինները, վարկային մարմիններին և գործկոմներին ու խորհուրդներին կից օժանդակ հանձնաժողովները զինվորական բաժնեգրության հաշվառումը չեն տանում:

Զինվորական մասերին ու հիմնարկներին պարտատոմսերի մատակարարում են կատարում շրջ. (քաղ.) խնայդրամարկղները։

Պետաշխնայդրամարկղների վրա դրվում է զինամասերին և հիմնարկներին փոխառության ագիտացիոն և այլ նյութերով մատակարարելը։

## ՓՈՓՈԽԻԿՆԵՐԻ ՅԵՎ ԱՐՁԱԿՈՒՐԴԱՎՈՐՆԵՐԻ ԲԱԺՆԵԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԿԱՐԳԸ

30. Զինուսուցման հավաքի կանչվող նորակոչիկները և յերկրային մասերի առաջին և հետագա տարիների ծառայության փոփոխիկները, փոխառության բաժնեգրվում են զինվորական մասերում, բաժնեգրության հաշվարկները կատարելով իրենց բնակության կամ աշխատանքի տեղում։ Զինվորական մասը նորակոչիկների և փոփոխիկների անհատական բաժնեգրության թերթիկներն ուղարկում է բաժնեգրի աշխատավայրի շրջ. (քաղ.) խնայդրամարկղին։ Շրջ. (քաղ.) խնայդրամարկղն ստացած բաժնեգրության թերթիկները հանձնում է այն ձեռնարկի կամ հիմնարկի վարչության, որի մեջ մշտապես աշխատում է փոփոխիկը կամ նորակոչիկը։

Բաժնեգրի աշխատավայրի կոլեկտիվին հանձնած փոփոխիկի բաժնեգրության թերթը միացվում է կոլեկտիվի հիմնական բաժնեգրության։ Փոփոխիկների հետ հաշվարկը կատարում է կոլեկտիվի վարչությունն ընդհանուր կարգով։

Գյուղացի մենատնտես նորակոչիկների և փոփոխիկների անհատական բաժնեթերթերը շրջ. (քաղ.) խնայդրամարկղն ուղարկում է բաժնեգրի բնակավայրի գյուղխորհրդին։ Գյուղխորհուրդը բաժնեթերթը ստանալուն պես կապվում է բաժնեգրի հետ պայմանավորվելով ներկայացրած հայտի բաժնեգրության վճարման մասին։ Բաժնեգրից վճարումներն ստանալուց հետո գյուղխորհուրդը տալիս է նրան պարտատոմսերը։

Արձակուրդավորների մեջ պարտատոմսերի տարածումը կատարվում է զինամասերի կողմից կանխիկ վճարով, արձակուրդավորներից մաս-մաս մուծելու փոխառության բաժնեգրությունն ընդունվում է այն դեպքում, յեթե զինամասին հայտնի յե արձակուրդավորի բնակավայրի կամ աշխատանքի տեղի ճիշտ հասցեն։ Այդ դեպքում արձակուրդավորների նկատմամբ բաժնեգրության հաշվարկների նույն կարգն է կիրառվում, որը ցույց է տրված վերում յերկրային մասերի փոփոխիկների կազմի համար։

## ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՑՈՒՄԸ ՄՊՔՎ ՈՒՂԵԿՑՈՂ ԶՈՐՔԵՐԻ ՅԵՎ ՄԻԼԻՑԻԱՅԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՄԵՋ

31. Փոխառության կոլեկտիվ բաժնեգրվելու դեպքում ՄՊՔՎ,



ուղեկցող զորքերի և միլիցիայի անձնական կազմին պարտատոմսերի մաս-մաս վճարման ժամանակամիջոց է տրվում՝ մինչև 12 ամիս—1932 թ. հոկտեմբեր 1-ից մինչև 1933 թ. հոկտեմբեր 1-ը ՄՊՔՎ և ուղեկցող զորքերի անձնական կազմի համար և 1932 թ. օգոստոս 1-ից առ 1933 թ. օգոստոս 1-ը ԲԳ միլիցիայի անձնական կազմի համար։ Պարտատոմսերի վճարումը կատարվում է ամսական կամ կես ամսյա հավասար մասներով նայած աշխատավարձը տալու ժամկետներին. մաս-մաս վճարման տևողությունը վորոշվում է նայած նրան թե յերբ է կատարվում առաջին մուծումը։

Մնացած հարցերում ՄՊՔՎ ուղեկցող զորքերի և միլիցիայի կոլեկտիվ բաժնեգրության վրա տարածվում են բանվոր-ծառայողների կոլեկտիվների համար սահմանված պայմանները։

Բաժնեգրության ձևակերպումը,— բաժնեգիրների և Պետաշխնայդրամարկղների հետ հաշվարկներ անելը կատարում են տեղում ՄՊՔՎ զորամասերն ու միլիցիայի մարմինները։ Այս մարմինները փոխառության աշխատանքների համար ստանում են մասհանումներ վճարած պարտատոմսերի ընդհանուր գումարի 0,5%-ի չափով։

Խնայդրամարկղները, վորոնք ձևակերպել են բաժնեգրությունը, մասհանումները մասերին և մարմիններին են հանձնում յերկու ժամկետում։ Բաժնեգրությունը ձևակերպելուց հետո, ձևակերպած բաժնեգրության գումարից 0,25% և բաժնեգրության բոլոր հաշվարկների վերջացնելու—մասհանման մնացած մասը։

## ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՑՈՒՄԸ ՅԵՐԿԱԹԳԾԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲԱՆՎՈՐ-ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԵՋ

32. Յերկաթգծի տրանսպորտում կոլեկտիվ բաժնեգրության կազմակերպումը, բաժնեգրության ձևակերպելու մուծումների մուտքերի նկատմամբ հսկողություն ունենալը տրվում է Պետվարկի և խնայգործի տրանսպորտային սիստեմի ոժանդակ հանձնաժողովների վրա ճՀԺԿ-ին կից կենտրոնական ոժանդակ հանձնաժողովների ղեկավարությամբ։

Փոխառության գծով յերկաթգծի շրջաններին օպերատիվ-տեխնիկական սպասարկությունը (բաժնեգրության ձևակերպումը, բաժնեգրության հաշվարկները, ամրացման տալոնների և պարտատոմսերի հանձնումը, հաշվարկման ապարատի և ոժանդակ հանձնաժողովի հրահանգումը և այլն) տրվում է Յեր-գծի շրջանային խնայդրամարկղների վրա Պետաշխնայդրամարկղների և Պետվարկի յերկաթգծի դիրեկցիաներին կից ՊԱԽԴ վարչությունների անմիջական ղեկավարությամբ։

Պետաշխնայդրամարկղների և Պետվարկի վարչությունները և շրջխնայդրամարկղները յերկաթգծի տրանսպորտում տանում են փոխառության գծով օպերատիվ տեխնիկական սպասարկություն և պատաս-

ՀՍՍՀ - ССРА
им. А. Мясникяна
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

խանգավորություն են կրում փոխառության աշխատանքի հաջող տանելու համար։

Յերկաթգծի վարչությունները նույն պարտականություններն են կատարում բաժնեգրության տանելու գործում՝ բաժնեգրությունը ձեվակերպելու և բաժնեգիրների ու Պետաշխնայդրամարկղների հետ հաշվարկներ անելու հարցերում, վորոնք դրված են ձեռնարկների հիմնարկների վրա։ Դիրեկցիաների վրա դրված է իրեն յենթակա շրջանների ընդհանուր ղեկավարություն՝ փոխառությունը տարածելու գործում և հսկողություն, վոր շրջանները կիրառեն կոլեկտիվ բաժնեգրության սահմանած պայմաններն ու բաժնեգրության հաշվարկների կարգը։

Յերկաթգծի տրանսպորտի բանվոր-ծառայողների մեջ կոլեկտիվ բաժնեգրությունը տարվում է միևնույն պայմաններով ինչ և քաղաքի բանվոր-ծառայողներինը։

Յեր-գծի շրջանային խնայդրամարկղները տրանսպորտի շրջանային ոժանդակ հանձնաժողովներին են մասհանում պարտատոմսերի համար շրջանից ստացած մուտքի գումարի 0,25%։

Մասհանումները հանձնվում են յերկու ժամկետում՝ բաժնեգրության ձեվակերպելուց հետո, բաժնեգրության ձեվակերպած գումարից 0,15%-ի չափով և բաժնեգրության բոլոր հաշվարկների վերջում մասհանման մնացած մասը։ Շրջանային հանձնաժողովները ՃՀԺԿ-ից կենտրոնական ոժանդակ հանձնաժողովի ցուցմունքով այդ մասհանումները բաշխում են ստորին ոժանդակ հանձնաժողովների յերկ-գծի դիրեկցիաներին կից ոժանդակ հանձնաժողովների մեջ։

Ցին. մարմինները ՊՍԽԴ և ԳՎ տեղական մարմինների միջոցով իրագործում են Յեր-գծի խնայդրամարկղների փոխառության տարածման աշխատանքի ղեկավարությունն ու հսկումը։

## ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ ՋՐԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲԱՆՎՈՐ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԵՋ

Կոլեկտիվ բաժնեգրության կազմակերպումը ջրային տրանսպորտի բանվոր-ծառայողների մեջ տարվում է ջրային տրանսպորտի, Պետվարկի և խնայգործի ոժանդակ հանձնաժողովի սխեմի վրա, ջրային կոմիսարիատի կենտրոնական հանձնաժողովի ընդհանուր ղեկավարությամբ։

Բաժնեգրության ոպերատիվ տեխնիկական սպասարկումը (բաժնեգրության ձեվակերպումը, հաշվարկներ և այլն) ջրային տրանսպորտում տարվում է Պետաշխնայդրամարկղների և Պետվարկի ջրային տրանսպորտի, շրջանային վարչության համաքաղաքային (համատեղ յեղած) հիմնարկների վրա։



Ջրային տնտեսության բանվոր-ծառայողների մեջ կոլեկտիվ բաժնեգրությունը տարվում է նույն պայմաններով, վորոնք սահմանված են քաղաքային բանվոր-ծառայողների կոլեկտիվ բաժնեգրության համար։

Բացառություն են կազմում ջրային տրանսպորտի բանվոր-ծառայողների այն կատեգորիայի բաժնեգրությունը, վորոնց աշխատանքում լինելը սեզոնային բնույթ ունի։ Այս կարգի բաժնեգիրների համար կիրառվում է հրահանգի հոդ. 37 ցույց տրված հաշվարկների կարգը. բատ վորում բաժնեգիրների աշխատանքի բնույթին և ջրային տրանսպորտում լինելու տեվողության, նայած բաժնեգրության հաշվարկները նրանց հետ տարվում են կամ ջրային տրանսպորտում լինելու շրջանում տրվող պարտատոմսերը մաս-մաս վճարելու և բաժնեգրության ամբողջ գումարի պարտատոմսեր ամրացնելու ճանապարհով, կամ յուրաքանչյուր մուծում կատարելու ժամանակ պարտատոմս տալով, ինչպես այդ ցույց է տրված հրահանգի հոդված 37-ում, այն է՝ առանց պարտատոմս ամրացնելու։

Պետաշխնայդրամարկղները ջրային տրանսպորտի շրջանային վարչություններին կից ոժանդակ հանձնաժողովներին են հանձնում շրջանի մասշտաբով պարտատոմսերի համար մուտք յեղած գումարի 0,25% չափով մասհանումը։ Մասհանումը տրվում է յերկու ժամկետում՝ բաժնեգրությունը ձեվակերպելուց հետո 0,15 % բաժնեգրության գումարից և բաժնեգրության բոլոր հաշվարկների վերջում մասհանման մնացած մասը։

Ջրային կոմիսարիատի կից կենտրոնական ոժանդակ հանձնաժողովի ցուցմունքով շրջանային հանձնաժողովներն այդ մասհանումները բաշխում են ջրային ոժանդակ հանձնաժողովների մեջ։

## ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՑՈՒՄԸ ՔԱՂԱՔԻ ԱՆԿԱԶՄԱԿԵՐՊ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԵՋ

34. Հանրայնացրած բնակֆոնդի տներում ապրող քաղաքային անկազմակերպ բնակչության մեջ փոխառության կոլեկտիվ բաժնեգրումը տարվում է բնակկազմակերպություններին կից ոժանդակ հանձնաժողովների միջոցով։ Բաժնեգրության տանելուն ներգրավվում են նաև հասարակական հրահանգիչներն ու կամավոր ընկերությունների ակտիվիստները։

Բոլոր բաժնեգիրների հետ հաշվարկներ անելը դրվում է բնակարանային կազմակերպությունների (բնակ. ընկերությունների, կոոպերատիվների, տրեստների և բնակարանային վարչությունների) վրա։

Այն բնակկազմակերպություններում, ուր բնակվարձի ստացման անդրամային կարգ է սահմանված, պարտատոմսերի մուծումների հավաքը բնակիչների կողմից կատարվում է կոմունալ վճարումների մուծ-

ման հետ միաժամանակ։ Կառավարությունը տնային վարչության, բնակվարձի տեղեկագրում դուրս է գրում բնակվարձից զատ նաև բնակիչներին հասնող փոխառության մուծման գումարը։ Վարկային հիմնարկը տեղեկագրերի հետ ստանալով մուծումները, փոխանցում է այդպիսիք համապատասխան վարկային հիմնարկում բնակվարչության հաշվին, այդ մուծումները հետագայում բաժնեգրության մարման ծառայեցնելու համար։ Բնակչի կողմից տեղակագրի ստանալուց հետո պարտատոմսի մուծումը չանելու դեպքում, մուծումը ժամկետանց անելու համար տույժ չի բարդվում։

Ոչ հանրայնացրած բնակֆոնդի տներում ապրող քաղաքային անկազմակերպ բնակչության մեջ, կոլեկտիվ բաժնեգրության անցկացումը դրվում է խորհրդների սեկցիաների և կամավոր ընկերությունների կազմակերպությունների կողմից առանձնացված լիազորների, ինչպես նաև հասարակական հրահանգիչների վրա, բաժնեգիրներից մուծումների հավաքի կազմակերպումը դրվում է այն պետաշխնայդրամարկղների վրա, որոնց ամրացված է բնակչության այդ խումբը։ Խնայդրամարկղները մուծումները հավաքելու համար հասարակական կարգով ներգրավում են կամավոր ընկերությունների կողմից առանձնացված ակտիվիստներին, մասսայական հրահանգիչներին և ուրիշներին։ Մուծումների հավաքելու համար լիազորներ գրավելու, լիազորների միջոցով բաժնեգիրների հետ հաշվարկներ անելու կարգն ու տեխնիկան, խնայդրամարկղների կողմից կիրառվում է այն նույնը ինչ ցույց է տրված գյուղական բնակչությունում փոխառությունը տարածելու հրահանգի մեջ և սահմանված է գյուղական վայրերում կոլտնտեսականների բաժնեգրության համար։

Քաղաքային անկազմակերպ բնակչության կոլեկտիվ բաժնեգրության կարող են մասնակցել ընտրական իրավունքից չզրկված անձինք։

## ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՑՈՒՄԸ ԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԻ ՄԵՋ

35. Թոշակառուների մեջ կոլեկտիվ բաժնեգրության անցկացնելու համար, թոշակառուների ներկայացուցիչների և տեղական գործկոմի օժանդակ հանձնաժողովից առանձնացվում են հասարակական բրիգադիրներ։ Բաժնեգրության թերթը հանձնվում է այն ապահովագրական կամ խնայողական դրամարկղին, որը բաժնեգրին թոշակ է վճարում։ Ապահովագրական կամ խնայողական դրամարկղը թոշակառուներից հերթական մուծումներն ընդունում է անհատական կարգով նրանց թոշակի վճարելու ժամանակ։ Խնայդրամարկղի միջոցով փոխառության բաժնեգրված թոշակառուները, նրանից անհատական կարգով ստանում են ամրացման տալոնները և հաշվարկների վերջում պարտատոմսերը։ Ապահովագրական դրամարկղները ձևակերպում են թոշակառուների



բաժնեգրությունը և հաշվարկներ են կատարում Պետաշխնայդրամարկղների հետ, այն նույն կարգով, որպիսին սահմանված է հիմնարկ-ձեռնարկների համար։

## ԲԱԺՆԵԳՐՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ ԽՄԲԱԿԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

36. Խմբակային կոմիտեների կողմից միավորվող բանվոր-ծառայողների կոլեկտիվ բաժնեգրությունն անց է կացվում այդ կոմիտեներին կից օժանդակ հանձնաժողովների կողմից։ Լրացրած բաժնեթերթերը խմբակները հավաքում են իրենց մոտ և բաժնեթերթերի քաղվածքները հանձնում են այն հիմնարկի վարչության, որտեղ աշխատում են բաժնեգիրները— բաժնեգրությունը ձևակերպելու և այս հրահանգով ցույց տված ձևով ընդհանուր կարգով հաշվարկներ անելու համար։

Տնային աշխատողների և մասնավոր ձեռնարկներում աշխատող բանվոր-ծառայողների հաշվարկներն իրենց վրա յեն վերցնում խմբակները։

Խմբակներին սպասարկող աշխնայդրամարկղների վրա, ընկած է հետևյալ խմբակների կողմից բաժնեգրության հաշվարկների ժամանակին կատարելուն։

## ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՑՈՒՄԸ ՍԵԶՈՆԻԿՆԵՐԻ ՄԵՋ

37. Սեզոնիկների և ժամանակավոր բանվորների մեջ փոխառության իրացումը տարվում է անտամարմինների, տեղական պրոֆմարմինների և օժանդակ հանձնաժողովների կողմից։

Բաժնեգիրները կարող են պարտատոմսերը գնել ինչպես կանխիկ վճարով, նույնպես և մաս-մաս վճարումով։ Մաս-մաս վճարման իրավունք տրվում է այն ժամանակի համար, որ սեզոնիկը պետք է լինի աշխատանքում։

Մուծումների պահումը կատարվում է բաժնեգիրներին տրվող աշխատավարձից։ Մուծումների չափը որոշվում է վարչության, պրոֆկազմակերպության և օժանդակ հանձնաժողովների հետ միասին, նայած բաժնեգրի իր աշխատանքի ընթացքում աշխատավարձ ստանալու նվագների թվին։ Յուրաքանչյուր մուծման ժամանակ բաժնեգրին, մուծման գումարի չափի պարտատոմս է տրվում, այս իսկ պատճառով մուծման գումարը պետք է հավասար լինի պարտատոմսերի որևէ կուպյուրի գումարի։

Սեզոնային և ժամանակավոր բանվորների հետ հաշվարկ անելու համար խնայդրամարկղները տնտ․մարմիններին ավանս պարտատոմսեր

են տալիս: Խնայդրամարկղների վրա է դրված, հսկել անամարմինների կողմից մուծումները ժամանակին կատարելու և պարտատոմսերը անամարմիններում պահելու վրա:

## ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՑՈՒՄՆ ՈՏԱՐՅԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄԵՋ

38. ԽՍՀՄ-ում ապրող ոտարյերկրյա քաղաքացիների մեջ փոխառության իրացումը կատարվում է նույն պայմաններով ինչ և սահմանված է Խորհրդային Միության քաղաքացիների համար՝ այսինքն կոլեկտիվ բաժնեգրության ձևով— մաս-մաս վճարում և կանխիկ հաշվով:

Ոտար քաղաքացիները պարտատոմսեր կարող են ձեռք բերել ինչպես խորհրդային, նույնպես և ոտարյերկրյա վալյուտայով: Ոտարյերկրյա քաղաքացիների կողմից պարտատոմսի ձեռք բերումը ոտարյերկրյա վալյուտայով կարող է կատարվել այն վալյուտայի հաշվին, որ թույլատրված է արտասահման փոխադրել, ինչպես և այն վալյուտայի հաշվին, որ ոտար քաղաքացիներն ստանում են արտասահմանից, պարտատոմս գնելու համար: Ոտարյերկրյա վալյուտայով գնված պարտատոմսերն ոժտվում են Պետբանկի սերտիֆիկատներով, որ իրավունք է տալիս պարտատոմս պահողին վճարումներն այդ պարտատոմսերով ստանալու ոտարյերկրյա վալյուտայով: Այդ պարտատոմսերը կարող են դուրս տարվել կամ ուղարկվել արտասահման, պարտատոմս գնողին նրանց վճարման ժամանակ տրվող անվանական թույլատվության հիման վրա: Սերտիֆիկատներով ոժտված պարտատոմսերը ԽՍՀՄ ներսում ազատ կերպով գնվում են Պետբանկի հիմնարկների, ինչպես և արտասահմանում Պետբանկի թղթակիցների կողմից:

Պարտատոմսերի վաճառքն ոտար վալյուտայով մաս-մաս մուծման և կանխիկ վճարման ձևով կատարվում է Մոսկվայում Պետբանկի արտասահմանյան բաժնի, ինչպես և Պետբանկի տեղական բաժանմունքների կողմից:

Փոխառության, ոտարյերկրյա քաղաքացիների մեջ ոտար վալյուտայով տարածելու, ոպերացիաները կատարվում է Պետբանկի կողմից որա համար սահմանված կանոնների հիման վրա:

Ոտարյերկրյա քաղաքացիների կոլեկտիվ բաժնեգրությունն ոտար վալյուտայով կարող է կատարվել աշխատավարձի ոտար վալյուտային մասից: Այս դեպքում ոտար քաղաքացիները, իրենց հիմնարկի (ձեռնարկի) վարչությանն տալիս են գրավոր համաձայնություն, արտասահման փոխադրվելու թույլտվություն ունեցող վալյուտայից, պահելու բաժնեգրության մուծումները:

Խորհրդային վալյուտայով ձեռք բերված պարտատոմսերը սերտիֆիկատով չեն ոժտվում և արտասահման փոխադրելու յենթակա չեն:



Այդ պարտատոմսերին վերաբերվող բոլոր վճարումները, Խորհրդային Միության մեջ կատարվում են խորհրդային վալյուտայով:

Ոտար քաղաքացիների կողմից խորհրդային վալյուտայով գնած պարտատոմսերի գնումն ու գրավ ընդունելը խնայդրամարկղները կատարում են ԽՍՀՄ ներսում մասսայական փոխառությունների շրջանառության մասին գործող կանոնների հիման վրա:

## 3. ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԿԱՆԽԻԿ ՎԱՃԱՌՔԸ

39. Պարտատոմսերի կանխիկ վաճառքը, նրանց արժեքի միանվագ վճարումով, կատարվում է նրանց վրա նշանակված գներով:

Պարտատոմսերի կանխիկ հաշվով վաճառելը կատարում են Պետաշխնայդրամարկղներն ու փոխառության իրացման ներգրավված վարկային հիմնարկները:

ԽՍՀՄ. ՑԺԿ. Կոլլեգիայի անդամ, Պետաշխնայդրամարկղների և

Պետվարկի գլխավոր վարչության պետ՝ ԼԻՖՇԻՑ

Մեթ. կոնսուլտանտ՝ ԿԱԳՈՍՏԻՆՍԿԻ

ՀՍԽՀ — ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0205662

27938

Սրբագրիչներ՝ Տ. Տերունի և Ե Հարությունյան

ՅԵՐԵՎԱՆ, ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ 1932 Թ.

Գլավլիտ № 7651. Պատվեր № 1981. Տիրաժ 1500.